

1632 69.16 (3 Մայ.): Յառաջ կը բերուի Լեմբերգի Առաքելական Նուիրակին տեղեկութիւնը՝ թէ Պոլսոյ Հայոց Պատրիարքն Յովհաննէս Լեմբերգի լատին Արքեպ.ին ձեռքը կաթողիկէ դաւանութիւն տուած է, եւ կը նկարագրէ անոր յատկութիւնները. նոյն տեղեկութիւնները կու տայ նաեւ կաթողիկէ Ռուսերու Մետրապոլիտը, կը հաղորդէ թէ նոյն Պատրիարքն Հռոմ պիտի գայ:

1632 90.3 (17 Օգ.): Կ'որոշուի՝ որ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարք Յովհաննէսին, որ Հռոմ գալու ճամբուն վրայ է, լաւ ընդունելութիւն ըլլայ, եւ անոր համար լաւ բնակարան մը պատրաստուի S. Pragsedis կամ S. Pietro in Vinculis եկեղեցւոյ մէջ:

1632 123.3 (24 Սեպտ.): Գահերէցը կը ծանուցանէ որ Քահանայապետն հրամայեց, որ Պոլսոյ հայ Պատրիարքին խնդրագիրը քննուի ի ժողովի կարգինալաց:

1633 279.4: Ըստ թղթոյ Յովհաննէս Մոլինիի եւ ըստ հրամանաց Ս. Քահանայապետին խնդիր եղաւ նկատմամբ Կ. Պոլսոյ այն հայ ընտանեաց, որոնք կ'ուզեն Հռոմ գալ եւ իրենց նախկին Պատրիարքին կամ Արքեպիսկոպոսին Յովհաննու հետ հոս հաստատուիլ: Եւ որովհետեւ տրուած տեղեկութիւնք շատ համառօտ էին, Ս. Ժողովն հրամայեց գրել նոյն Մոլինիին, որ աւելի ընդարձակ տեղեկութիւններ տայ, թէ քանի՛ ընտանիք են, քանի՛ անձ, գալ ուզողները կաթողիկէ հաւատքը կը դա-